# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

## Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐՈՅՍ.

Այս Դեկտեմբեր ամսում «Արարատ» ամսագրոյս չորեքտասաներորդ շրջանը լրանալով՝ 1882 թուականի Յունվարից պէտք է հնգետասաներորդ (ԺԵ) շրջանն սկսի։

Ուստի խնդրում եմք մեր Գործակալներէն, որ փութան ծանուցանել Տպ. Ժողովոյն «Արարատ»ին բաժանորդագրուիլ ցանկացողաց անուանքը ճիշդ հասցէներով։

Մեծայոյս եմք, որ մեր սիրելի ազգայինք, ինչպէս մինչև ցարդ համակրած են «Արարատ» ամսագրոյս և իւրեանց խրախուսանքը չեն զլացած, նոյնպէս կփութան յառաջակայում և միշտ մի և նոյն զգացմամբք բաժանորդագրուիլ և օգնել սմին։

Արարատի թերթից քանակութիւնը, ուղղութիւնն, բովանդակութեանց ծրագիրը և տարեկան բաժանորդագինը մի և նոյն կմնան։

---

Մայր Աթոռոյս Տպարանական Ժողովը խնդրում է Արարատի գործակալներից, որ փութան հասուցանել իրան յառաջիկայ 1882 թուականի Արարատի բաժանորդաց անուանական ճիշդ ցուցակը։

---

## ՎՐԻՊԱԿՔ.

Արարատի նախընթաց Նոյեմբեր ամսատետրի մէջ «Կրօնաւորացն անհրաժեշտ է գիտութիւն» յօդուածի մէջ Տիեզերական ժողովոյ մասին թարգմանչի տուած հետագայ ծանօթութիւնը սխալմամբ թողուած է, որը հարկ կհամարիմք այս տետրակի մէջ զետեղել. «Աւելորդ չեմք համարում յիշեցնել մեր Հայ կրօնաւորներին, որ Հայաստանեայց սուրբ եկեղեցին ընդունում է միայն առաջին երեք Տիեզերական ժողովները, որոց մանրամասն և լիակատար պատմութիւնները հարկ անհրաժեշտ է հաղորդել Հայ ուսանողներին։

Այն ամսատետրի մէջ Գ. Ճեմարանում Ձայնագրութեան ուսուցիչ Արժ. Ղևոնդ վարդապետի ռոճիկը նշանակած է 16 ր. 33 1/3 կ. փոխանակ 63 1/3 կ.ի